ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«16» Փետրվար 2023թ. N 20-Ա

ԼԻՑԵՆԶԻԱՅԻՆ ԿԻՑ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԿԱՍԵՑՈՒՄԸ ՎԵՐԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև «ԼԱՎՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2023 թվականի փետրվարի 7-ի գրությունը՝ կից ներկայացված հիմքերը և «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի փետրվարի 20-ի գրությունը՝ կից ներկայացված հիմքերը

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2019 թվականի ապրիլի 12-ի N 32-Ա հրամանով «ԼԱՎՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության ճարտարապետաշինարարական փաստաթղթերի ճարտարապետական մաս ոլորտի N 17060-12 ներդիրի և քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության ճարտարապետաշինարարական փաստաթղթերի

կոնստրուկտորական մաս ոլորտի N 17060-13 ներդիրի գործունեության կասեցումը համարել վերացած 2023 թվականի փետրվարի 12-ից:

2. 2019 թվականի փետրվարի 15-ի N 17-Ա հրամանով «ԱՐՏԱԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության ճարտարապետաշինարարական փաստաթղթերի ճարտարապետական մաս ոլորտի N 16973-12 ներդիրի և քաղաքաշինության բնագավառում քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության ճարտարապետաշինարարական փաստաթղթերի կոնստրուկտորական մաս ոլորտի N 16973-13 ներդիրի գործունեության կասեցումը համարել վերացած 2023 թվականի փետրվարի 25-ից:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

- ՀՀ լիցենզիաների միասնական էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություն,

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3/16/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ